

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵՒԱՅԻ ԾՆՈՂՆԵՐԻ
(ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ) ՄԻՋԵՎ ԿՆՔՎՈՂ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՍԵԹՈՂԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ ոչ առևտրային կազմակերպության և հաստատություն հաճախող երեխայի ծնողների /նրանց օրինական ներկայացուցիչների/ միջև կնքվող

« _____ » 200 թ.

ՀՀ մարզը -----

/քաղաք, գյուղ/ ----- համայնքը
նախադպրոցական ուսումնական հաստատությունը /ոչ առևտրային կազմակերպություն/ N,
անվանումը

այսուհետ՝ հաստատությունը՝ հանձին՝ տնօրեն -----

/Ազգանուն, անուն, հայրանուն/
հաստատության կանոնադրության համաձայն, մի կողմից, մյուս կողմից՝ ծնող, նրա օրինական
ներկայացուցիչ /այսուհետև՝ երեխայի ծնողի/

/Ազգանուն, անուն, հայրանուն/

/Երեխայի ազգանուն, անուն, հայրանուն/

Կնքեցին պայմանագիր հետևյալի մասին.

1. Հաստատությունը պարտավորվում է՝
 - 1.1 ընդգրկել երեխային հաստատության համապատասխան խմբում,

փաստաթղթի հիման վրա /հիմքը/

1.2 Ապահովել՝ երեխայի կյանքի, ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումը, նրա ինտելեկտուալ, ֆիզիկական և անհատական զարգացումը, երեխայի զարգացման շեղումների շտկողական աշխատանքների իրականացումը, երեխայի ստեղծագործական ընդունակությունների, հետաքրքրությունների զարգացումը, ցուցաբերել անհատական մոտեցում՝ երեխայի զարգացման առանձնահատկությունների հաշվառմամբ:

Հոգալ երեխայի հուզական բարենպաստության համար,

1.3 Ուսուցանել երեխային ----- ծրագրով,

ծրագրի անվանումը, երաշխավորված է ու՞մ կողմից

1.4 Կազմակերպել հաստատությունում առարկայական-զարգացնող միջավայրը /տարածք, խաղային միջոցներ, խաղալիքներ, ուսումնադիտողական բազա, պարագաներ/

1.5 Կազմակերպել երեխայի գործունեությունը նրա տարիքային և ֆիզիոլոգիական առանձնահատկություններին, կրթական ծրագրի բովանդակության համապատասխան,

1.6 Մատուցել լրացուցիչ վճարովի կրթական ծառայություն,

ծառայության տեսակը, անվանումը, ի՞նչ միջոցներով, կազմակերպման ձևը՝

1.7 Իրականացնել երեխայի բժշկական սպասարկումը.

բուժկանխարգելիչ միջոցառումները -----

առողջարարական միջոցառումները -----

/պարբերականությունը/

1.8 Ապահովել երեխային սննդով, որն անհրաժեշտ է նրա բնականոն զարգացման համար

պարբերականությունը /քանի՞ անգամ/

1.9 Սահմանել հաստատություն երեխայի հաճախման գրաֆիկը,

Շաբաթվա օրերը, ռեժիմը, հանգստյան օրեր

Սահմանել երեխայի բացակայության դեպքում վճարի վերահաշվարկի պայմանները:

1.10 Պահպանել երեխայի տեղը նրա հիվանդության, բուժման, արգելափուլի /կարանտինի/ ծնողի հիվանդության, գործուղման, արձակուրդի, ինչպես նաև ամռան շրջանում ոչ ավել, քան 75 օր, անկախ ծնողի արձակուրդի տևողությունից կամ անկախ ծնողի կամքից հաստատության հարկադիր պարապուրդի տևողությունից:

2. Ծնողը /նրա օրինական ներկայացուցիչը/ պարտավորվում է՝ պահպանել հաստատության կանոնադրությունը և սույն պայմանագիրը,

2.1 Ժամանակին վճարել երեխայի պահման, լրացուցիչ կրթական վճարովի ծառայությունների կազմակերպման համար վճարները:

2.2 Տեղեկացնել հաստատությանը՝ երեխայի բացակայության, հիվանդության մասին:

2.3 Ցուցաբերել հաստատությանը աջակցություն՝ հաստատության կանոնադրական խնդիրների իրականացման գործում:

3. Հաստատությունն /տնօրենը/ իրավասու է՝

3.1 Հանել երեխային հաստատությունից՝ այդտեղ նրա հետագա մնալու վերաբերյալ խոչընդոտող առողջական վիճակի մասին բժշկական եզրակացության առկայության դեպքում:

3.2 Լուծել սույն պայմանագիրը վաղաժամկետ՝ պայմանագրով ամրագրված ծնողների պարտավորությունները սիստեմատիկաբար չկատարելու դեպքում՝ ներկայացնել առաջարկություններ ընտանեկան դաստիարակության ուղղությամբ:

4. Ծնողն իրավունք ունի՝

4.1 Մասնակցել հաստատության մանկավարժական խորհրդի նիստի աշխատանքներին:

4.2 Ընտրել լրացուցիչ կրթական ծառայության համար կրթադաստիարակչական ծրագրերը և կրթական ծառայությունների տեսակները:

4.3 Առաջարկություններ մտցնել հաստատությունում կազմակերպվող լրացուցիչ կրթական ծառայությունների կազմակերպման վերաբերյալ:

4.4 Լսել տնօրենի, մանկավարժների հաշվետվությունները երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների մասին:

4.5 Սույն պայմանագիրը վաղաժամկետ կասեցնել միակողմանի՝ նախապես տեղյակ պահելով այդ մասին հաստատությանը:

4.6 Պայմանագիրն ուժի մեջ է ստորագրման պահից և կարող է փոփոխվել 2 կողմերի համաձայնությամբ:

4.7 Պայմանագիրը կազմվում է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է 1 օրինակ:

Կողմերը՝

Նախաադարձական հաստատություն

N _____

Հասցե, հեռախոս՝

Կնիք

Ստորագրություն

Ծնողը /նրա օրինական ներկայացուցիչը/

Ազգանուն, անուն, հայրանուն

Անձնագրային տվյալներ -----

հասցե՝ -----

Հեռախոս՝ -----

